ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

1960 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-ԻՆ, ՇԱԲԱԹ, «տօն սրբոց առաքելոցն և առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի և Բարթողիմէոսի»։

Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։

Սուրբ պատարագի երգեցողությունը կատարեց Հոգևոր Ճեմարանի երգչախումբը։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Սանթուրյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-ԻՆ, ՇԱԲԱԹ, «տօն Սրբոյն Յակոբայ Մծբնայ հայրապետին»։

Երեկոյան Հոգևոր Ճեմարանում կազմակերպվեց գրական-գեղարվեստական երեկույթ՝ նվիրված մեծ սրբի՝ Հակոբ Մծբնա հայրապետի հիշատակին։

Երեկոյին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, երեկոյան ժամը 4-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց սրահում, դասախոսություն կարդաց ռումինացի հայտնի հայագետ, Բուխարեստի համալսարանի պրոֆեսոր Վլատ Բենեցեանուն «Հայ մշակույթի զարգացման պատմությունից» թեմայով, որը լսվեց մեծ հետաքրքրությամբ։

Դասախոսության ներկա էին Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռի միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը և վանքի պաշտոնեությունը։

Դասախոսության վերջում վերատեսուչ Հայկազուն սրբազանը շնորհակալություն հայտնեց հարգելի հայագետին՝ շահեկան դասախոսության համար։

***

1961 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, ԿԱՂԱՆԴ ԵՎ ՏԱՐԵՄՈՒՏ։

Ամանորի առթիվ Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց և քարոզեց Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը, «Թող դմա այս ամ կա» (Ղուկ. ԺԳ 7) բնաբանով։ Քարոզիչ սրբազանը անդրադարձավ Մայր Հայրենիքի շինարարության բուռն վերելքին և Մայր Աթոռի վանական-վարչական, հոգևոր շինության աշխատանքներին, սրտագին բարեմաղթություններ արեց այս տարի ևս Հայրենիքի և ժողովրդի բարօրության, Մայր Աթոռի անսասանության և պայծառության, և Վեհափառ Հայրապետի կյանքի արևշատության համար։

Հավարտ սուրբ պատարագի, Իշման Ս. Սեղանի առաջ, կատարվեց Հայրապետական մաղթանք՝ նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի հանդիսադրությամբ։

Մաղթանքից հետո, հավատացյալները աջահամբույրով շնորհավորեցին Վեհափառ Հայրապետին ամանորի առթիվ։

Հավարտ սուրբ պատարագի, Մայր Աթոռի միաբանության անունից Վեհափառ Հայրապետի նոր տարին շնորհավորեց Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 3-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Աթոռից հրաժեշտ առնելով Բեյրութ մեկնեց բարեշնորհ Ժիրայր սարկավագ Ճերեճյանը, որը 1959 թվականին հաջողությամբ ավարտել էր Հոգևոր Ճեմարանի լսարանական բաժինը և շուրջ մեկ և կես տարի Մայր Աթոռում անցկացրել փորձի մի շրջան, հոգևոր ծառայության ասպարեզում։

Նույն օրը, Բեյրութից Մայր Աթոռ ժամանեցին Հոգևոր Ճեմարանի թվով 5 նոր ուսանողներ։ Երևանի կայարանում ուսանողներին դիմավորեց և Մայր Աթոռ առաջնորդեց Հոգևոր Ճեմարանի ավագ վերակացու արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը։ Նոր ուսանողները Մայր Տաճարում իրենց ուխտը կատարելուց հետո, ներկայացան վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսին, որը ապա նրանց առաջնորդեց Վեհարան, Վեհափառ Հայրապետի Ս. Աջը համբուրելու և Նրա օրհնությունները ստանալու համար։

Ս. Ննդյան արձակուրդներից հետո, հունվարի 9-ին, հետ քննության նոր ուսանողները բաժանվեցին համապատասխան դասարանների վրա։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 5-ԻՆ, ՀԱՆԳՇԱԲԹԻ, «Ճրագալույց Ննդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։

Մայր Տաճարում կատարվեց Ճրագալույցի արարողությունը։ Սուրբ պատարագը մատուցեց լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը։ Հավարտ սուրբ պատարագի կատարվեց նախատոնակ։

Արարողության նախագահում էր Վեհափառ Հայրապետը, որը հավարտ սուրբ պատարագի, «Խորհուրդ մեծ և սքանչելի» Ննդյան շարականի երգակցությամբ, առաջնորդվեց Վեհարան, որտեղ օրհնեց միաբանությանը և արձակեց։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 7-ԻՆ, ՇԱԲԱԹ, «Յիշատակ մեռելոց»։

Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։ Հավարտ սուրբ պատարագի կատարվեց հոգեհանգիստ «վասն համօրէն ննջեցելոց»։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 8-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 10-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Աթոռից հրաժեշտ առավ և Հալեպ, իր ծնողների մոտ վերադարձավ բարեշնորհ Սարգիս սարկավագ Սարգսյանը, որը 1960 թվականին փայլուն հաջողությամբ ավարտել էր Հոգևոր Ճեմարանի լսարանական բաժինը։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 13-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, «Տօն անուանակոչութեան Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի»

Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 14-ԻՆ, ՇԱԲԱԹ, «Տօն ծննդեան Սրբոյն Յովհաննու Կարապետին»։

Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 15-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։